

ԷԹԻՎԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Պաշտոնական թարգմանություն



Ներքին Աուդիտորների
Ինստիտուտ | Հայաստան

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Սկզբունքներ

Ակնկալվում է, որ ներքին աուդիտորները կկիրառեն և կպահպանեն ստորև նշված սկզբունքները.

1. Ազնվություն

Ներքին աուդիտորների ազնվությունը վստահություն է ձևավորում և հիմքեր ստեղծում իրենց դատողություններին վստահելու համար:

2. Անաչառություն

Ներքին աուդիտորները ուսումնասիրվող գործառույթի կամ գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, գնահատման և հաղորդակցման ժամանակ դրսևորում են մասնագիտական անաչառության բարձրագույն մակարդակ: Ներքին աուդիտորներն իրականացնում են գործին վերաբերվող բոլոր հանգամանքների հավասարակշռված գնահատում և իրենց դատողությունները ձևավորելիս անձնական կամ որևէ այլ շահերից ելնելով անհարկի ազդեցության չեն ենթարկվում:

3. Գաղտնիություն

Ներքին աուդիտորները հարգում են ստացվող/ձեռք բերվող տեղեկատվության արժեքն ու սեփականության իրավունքը և առանց համապատասխան թույլտվության չեն հրապարակում այդ տեղեկատվությունը՝ բացառությամբ իրավական կամ մասնագիտական պարտավորվածությամբ պայմանավորված դեպքերի:

4. Կարողություն

Ներքին աուդիտորները կիրառում են գիտելիքներ, հմտություններ և փորձառություն, որոնք անհրաժեշտ են աուդիտի ծառայությաններ իրականացնելու/մատուցելու համար:

CODE OF ETHICS

Principles

Internal auditors are expected to apply and uphold the following principles:

1. Integrity

The integrity of internal auditors establishes trust and thus provides the basis for reliance on their judgment.

2. Objectivity

Internal auditors exhibit the highest level of professional objectivity in gathering, evaluating, and communicating information about the activity or process being examined. Internal auditors make a balanced assessment of all the relevant circumstances and are not unduly influenced by their own interests or by others in forming judgments

3. Confidentiality

Internal auditors respect the value and ownership of information they receive and do not disclose information without appropriate authority unless there is a legal or professional obligation to do so.

4. Competency

Internal auditors apply the knowledge, skills, and experience needed in the performance of internal audit services.

Վարքագծի կանոններ

1. Ազնվություն

Ներքին աուդիտորները.

1.1. Պետք է իրենց աշխատանքը կատարեն ազնվորեն, բարեխղճորեն և պատասխանատվությամբ:

1.2. Պետք է դիտարկեն օրենքները և կատարեն օրենքի ու մասնագիտության պահանջներից ակնկալվող բացահայտումներ:

1.3. Չպետք է գիտակցաբար լինեն որևէ անօրինական գործունեության մասնակից կամ ներգրավվեն այնպիսի գործողություններում, որոնք վարկաբեկում են ներքին աուդիտի մասնագիտությունը կամ կազմակերպությունը:

1.4. Պետք է հարգեն կազմակերպության օրինական և բարոյական նպատակները և աջակցեն դրանց իրականացմանը:

2. Անաչառություն

Ներքին աուդիտորները.

2.1. Չպետք է մասնակցեն այնպիսի գործողություններին, որոնք կարող են ազդել իրենց անաչառության վրա կամ դիտվել այդպիսին: Դա վերաբերում է նաև այնպիսի փոխհարաբերություններին կամ գործունեությանը, որոնք կարող են հակասել կազմակերպության շահերին:

2.2. Չպետք է ընդունեն որևէ իր կամ ծառայություն, որոնք կարող են ազդել իրենց մասնագիտական կարծիքի վրա կամ դիտարկվեն որպես այդպիսին:

2.3. Պետք է հայտնեն/բացահայտեն իրենց հայտնի դարձած բոլոր էական փաստերը, որոնց չբացահայտման դեպքում կարող է խեղաթյուրվել աուդիտի մասին հաշվետվությունը:

Rules of Conduct

1. Integrity

Internal auditors:

1.1. Shall perform their work with honesty, diligence, and responsibility.

1.2. Shall observe the law and make disclosures expected by the law and the profession.

1.3. Shall not knowingly be a party to any illegal activity, or engage in acts that are discreditable to the profession of internal auditing or to the organization.

1.4. Shall respect and contribute to the legitimate and ethical objectives of the organization.

2. Objectivity

Internal auditors:

2.1. Shall not participate in any activity or relationship that may impair or be presumed to impair their unbiased assessment. This participation includes those activities or relationships that may be in conflict with the interests of the organization.

2.2. Shall not accept anything that may impair or be presumed to impair their professional judgment.

2.3. Shall disclose all material facts known to them that, if not disclosed, may distort the reporting of activities under review.

3. Գաղտնիություն

Ներքին աուդիտորները.

3.1. Պետք է խոհեմ/խելամիտ լինեն իրենց պարտականությունների շրջանակում հայտնի դարձած տեղեկատվության օգտագործման և պահպանման հարցում:

3.2. Չպետք է օգտագործեն տեղեկատվությունն անձնական շահից ելնելով, կամ որևէ կերպ, որ կարող է հակասել օրենքին կամ բացասաբար ազդել կազմակերպության՝ օրինական և բարոյական նպատակների իրականացման վրա:

4. Կարողություն

Ներքին աուդիտորները.

4.1. Պետք է ներգրավվեն միայն այնպիսի գործառնություններում, որոնց համար ունեն անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և փորձառություն:

4.2. Պետք է իրականացնեն ներքին աուդիտի ծառայություններ «Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին» համապատասխան:

4.3. Պետք է շարունակաբար բարելավեն իրենց հմտությունները, մատուցվող ծառայությունների արդյունավետությունն ու որակը:

3. Confidentiality

Internal auditors:

3.1. Shall be prudent in the use and protection of information acquired in the course of their duties.

3.2. Shall not use information for any personal gain or in any manner that would be contrary to the law or detrimental to the legitimate and ethical objectives of the organization.

4. Competency

Internal auditors:

4.1. Shall engage only in those services for which they have the necessary knowledge, skills, and experience.

4.2. Shall perform internal audit services in accordance with the International Standards for the Professional Practice of Internal Auditing.

4.3. Shall continually improve their proficiency and the effectiveness and quality of their services.